

ՔՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

1921 - օգոստոս - 1921

Հ. ՄԻՍՏ ՆՈՒՐԻԱՆ. — Նապոլէոն Ա. և Միխայիլ Բարեկամներ	241
ԽՄԲ. — Նաբոլէոն և Բանաստեղծներ	259
Հ. ԱՐՄԵՆ ՂԱԳԻՅԱՆ. — Աղեքսանդր Մաննոնիի «Հինգ Մայիս»	260
Հ. ԱՐՄԵՆ ՂԱԳԻՅԱՆ. — Պետրոս Պետրովի «Հինգ Մայիս 1821»	262
Հ. ԴԻՈՆԵՍԻՍ ԳԱՂԱՏՈՍԵԱՆ. — Աղեքսանդր Փուլքինի «Բոնապարտ և Սելուցիք»	268
ԱՐՄԵՆ-ԵՐԱԹ. — Արծիւ	264
Հ. ՂԵՌՈՒՄ ՏԱՅԵԱՆ. — Նաբոլէոնի երաժշտական ճաշակը	267
Հ. ԵՐՈՒՆԱՅԻ ՄԻՇՈՆԵԱՆ. — Կրօնական ներշնչմունք Պոնապարտի	268
ԵՂ. ԽԱՋԱՏՈՒՐ ՎՐԹԱՆԷՍԵԱՆ. — Հայկական ծագմամբ Նաբոլէոնական Նաւասարդ մը Հոգմայ մէջ	269
Հ. ՂԵՌՈՒՄ ՏԱՅԵԱՆ. — Խորհրդաւոր Գիտաւորը	271
Հ. ՂԵՌՈՒՄ ՏԱՅԵԱՆ. — Հանգիստ վ. Հ. Բարսեղ Արքեպիսկոսի Միխայիլ Բարեկամ վարդապետի	271

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ



ՄԱՐՏԱՄԱՐԻ ՀԱՆԳՍ ՄՈՒՐԱՏ — ՌԱԺԱՅԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ. — Գոլիւ 14-ին կատարուեցաւ Մ. Ռ. Վարժարանին մէջ Մարմամարզի չօնդ հանդէս մը, որուն նկարագրութիւնը վի. նետոյ «Gazzetta di Venezia» օրաթերթը (Գոլիւ 20ի) կու տայ այսպէս.

«Անցեալ հինգշաբթի (ժ. 18) Մուրատ Ռաֆայելեան Հայ Վարժարանին մէջ տեղի ունեցաւ երիտասարդ ուսանողներու մարզանքի հանդէսը, ինչպէս ծանուցուած էր նախապէս: Ներկայ էր հոն բազմութիւն մը տեարց և տիկնայց, որ ազնուօրէն հրաւիրուած էին Մեծարգոյ Հայրերէն: Ներկայից մէջ նշմարելիքն էր. Արհ. Գերպ. Գովսէփ կոմս Սանֆերմօ, Հ. Գովհաննէս Թոքոսեան Աթոռակալ, Գերպ. Միքիէի ժողովրդապետ և զանազան ուսուցչապետք Վարժարանին:

Էն առաջ վարժարանի Շեփորախումբը մտէ, սորո Յովսէփի և Ալեմշահ ուսանողին առաջնորդութեամբ հնչեցող յաջողապէս զանազան կտոր-

ներ և խալական և հայկական քայլերգները: Գետոյ առոյգ երիտասարդները՝ մարզանքի տարազով ասպարէզ մտան՝ զանազան զունդերու բաժնուած, անհամբեր՝ իրենց վաստակներուն ապացոյցը տալու ֆիզիքական կրթանքին, ինչպէս միւս ամէն ճիւղերու մէջ:

Քաջ ուսուցիչ Բրօֆ. Կալլօի մէկ ականարկին՝ քանի մը յետ և յառաջ խաղացքէ վերջ, որ օրինակելի ճշդութեամբ մը կատարուեցան, շարժումի սկիզբ տրուեցաւ կազմածներուն վրայ:

Սկսան առաջին դասերէն ոմանք, ոստումի մէջ էն կտրիններէն երևելի եղան՝ զրեթէ երեք մեղր բարձրութեամբ՝ Թաճեան, Պոտուրեան, Քէլէշեան և Քրերքեան:

Հետաքրքրական անցաւ նաև գնտախաղը. հիւսնալի էր արթնութիւնը քրպիկի փորձերուն մէջ, ձիւ և զուգահեռակի վրայ, և մասնաւոր գովեստից արժանի եղաւ ամենուն երազութիւնը, նաև ստորին դասարաններու աշակերտացը. նոյնպէս չուանի և ձող վրայ ելլելու ատեն, մէն

մի խումբ իր գնդապետին հրամանին տակ. փոքրիկ զորագլուխ՝ փոքրիկ զինուորներու վրայ, կտրիճ մարզիկները յաճախ ծափեր խլեցին. և երբ ժ. 13ին լմացաւ գեղեցիկ հանդէսը, Շենփորախումբին նուազին ժամանակ ամէնքը կեցցէլներ գոչեցին քաջ ուսուցչին և իւր արժանաւոր աշակերտներուն, որ այդ կերպով և ուսման սիրով և պարտոց ճշգրիտ կատարմամբ կը պատուեն իրենց հեռուոր հայրենիքը:

Եւ մենք, օրաթերթիս սիւներէն կ'ողողեց սիրազեղ ողջոյն մը և մաղթանք Հայաստանի այդ յոյսերուն, և կը ներկայացնենք միտ եռանդուն ուրախակցութիւնները Մեծապ. Բրոֆ. Կալլօի, Վարժարանի տեսուչ Հ. Սիմոն Երեմիանի և փոխ-տեսուչ Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի:

* ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՈՐԱԹ ՄԸ ԿՐԱՐԱՐԱՅԻ ՏԱՅՐԸ. — Օգոստոս 4ին տեղի ունեցեր է Կրաբբայի յաղթական բարձունքին վրայ աննախընթաց և յուզիչ հանդէս մը: Հոն բարձրադող Աստուածածնայ արձանը, — որ 1904 օգոստոս 4ին օրհնուած էր Վենետիկոյ Սարթօ պատրիարքէն (յետոյ Պիոս Ժ. Պապ), իսկ 1918 յունուար 14ին աստրիական ռումբերէն Պնասուած և խալաացի զինուորներէ տարուած էր ստորոտի ֆրեսքան գիւղը, — այժմ իր իսկ կտորներով ամբողջացուած ու նորոգուած՝ փոխադրուեր է դարձեալ իր առջի խորհրդաւոր ու երկնաբերձ վայրը:

Հանդէսը սարգուած է Եկեղ. Իլիանութեան և իւրով. Կառավարութեան համբարշի գործակցութեամբ: Տէրութիւնը, Վենետիկոյ Գաւառի եպիսկոպոսը, Քաղաքապետութիւնը՝ իրենց պալատեանական ներկայացուցիչներն ունեցեր են. Թազաւորին կողմանէ՝ Պերկաժոյի Դուքսը, Կառա-

վարութեան կողմանէ ալ հախկին Վարչապետ Օրլանտօ ներկայ եղեր է: Անձամբ ներկայ գտնուեր են Բատուայի և Վիլենցայի եպիսկոպոսները, Խորհրդարանի անդամներ, ընկերութեանց ներկայացուցիչներ, զինուորական գունդեր, և այլն: Սրաթերթը ներկայից թիւը մինչև 15000 հոգի կը հաշուեն: Կը յիշուի նաև Պեչևիքացի զօրավար Հօլման, Գաղղ. Անգղ. Հոլանտ. Շուետ. Տանիմայք. Նորվեգ. և Զուիցիացի սպաներով, որոնք մասնաւոր ուսումնասիրութեանց համար այդ կողմերը գտնուած են ու նուիրեր են պսակ մը Աստուածածնայ խորանին:

Սակայն ինչ որ աւելի պատմական պիտի մնայ մեզ՝ Հայկական պատարագն է, զոր մատուցեր է Միաբանութենէս Հ. Անդրէաս Վ. Վարդաբուրեան, որ պատուուած է խալ. Տէրութենէն Պատերազմի խալով, Լիտուի Բերդապահ զօրաց պատերազմի ժամանակ իր մատուցած հոգևոր ծառայութեանց համար, իտալական օրաթերթ մը կ'ըսէ. «*Միլի (Ռ)րլանտօ հանդիսը կը քանար պայտօնական ձառով մը՝ փառաբանելով իտալական յաղթանակը այդ նուիրական արձանին պաշտպանութեան տակ՝ անդին Հայագգի Հայր մը պատարագ կը մատուցանէր*»: Ներկայ եղող զրօշներուն մէջ յանուանէ կը յիշատակուի նաև «Հայկական Երազդուր Հայաստանի կտրիճ յոյսերուն (մասնակցող Մ. Թ. Վարժարանի աշակերտները կ'ակնարկէ)»:

Շատ յուզիչ տպաւորութիւն մ'ըրած է՝ երբ էն վերջը զօրավարներու խումբ մը նուազեր է փակման երգը, որ կը սկսի «Կրաբբա լիս», դոսիմ հայրենիքս ես»:

Մ Ե Բ Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ Ը

Հրապարակաւ կը յայտնենք Զեմազին սրտիւ **Պ. ԱՐՇԱԿ ԳԱԼՓԱՆԻ**, որ խմբագրութեանս միջոցով նուիրեց մեր Միութարեան Թանգարանին համար՝ հինգ արծաթ դրամներ (2 Եթովպական Մենեղլե. 2 իտալական Եթովպիոյ և 1 Աւստրիական Մարիամ Թերեզայ).

ԻՄԲԱԿԻ. «ԲԱԶՄԱՎԷՊԻ»